ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ
НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱԲԻՆԵՏԸ

1969 թ. հոկտեմբերի 1-ին, Կոմիտասի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ կոնսերվատորիայի գիտական խորհուրդը որոշեց կոնսերվատորիայում ստեղծել ժողովրդական երաժշտական ստեղծագործության կաբինետ, որը պետք է կազմակերպեր ժողովրդական երաժշտության նմուշների հավաքման գիտարշավներ, նոտագրեր հավաքած նյութը, ձեռնարկեր ժողովրդական երգերի ու գործիքային մեղեդիների հրատարակման գործը, ղեկավարեր ուսանողների գիտական աշխատանքները ժողովրդական երաժշտության ուսումնասիրման բնագավառում, ստեղծագործական կապեր հաստատեր միութենական կոնսերվատորիաների համապատասխան կաբինետների ու ամբիոնների հետ և այլն։

Առ այսօր կաբինետը կազմակերպել է 19 գիտարշավ դեպի հանրապետության տարբեր շրջանները (Թալին, Մեղրի, Սպիտակ, Եղեգնաձոր), դուրս է եկել նրա սահմաններից (Նախիջևան, Ադլերի և Մեծ Սոչիի շրջաններում ապրող համշենահայերի համայնք, Կիրովաբադ, Ախալցխա)։ Ձայնագրությունների ֆոնդն արդեն հասնում է շուրջ 4300-ի, որի մեկ երրորդը նոտագրված է։ Արշավների ընթացքում ձեռք բերված երաժշտական գործիքների, հայկական տարազի ու կենցաղային այլևայլ իրերի նմուշները կազմում են կաբինետում գործող մշտական ցուցահանդեսի բովանդակությունը՝ ստեղծելով դասավանդման պրոցեսին նպաստող ֆոլկլորային համապատասխան մթնոլորտ։

Կաբինետը նախապատրաստել է դասընթացներ. մասնագիտականը («Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն») կարդացվում է երաժշտագիտական, կոմպոզիտորական ու խմբավարական, իսկ ընդհանուրը («Ֆոլկլոր»)՝ կատարողական բաժիններում։ Մասնագիտական դասընթացը զուգահեռարար համալրվում է «Հայկական ձայնագրության նոր (Լիմոնջյանի) սիստեմի» ուսումնասիրման, ինչպես նաև ժողովրդական երգերի ու գործիքային մեղեդիների նոտագրության անհատական պարապմունքներով։

Ժողովրդական երաժշտության բնագավառից վերցված թեմաներ լուսաբանող հաղորդումներով մեր ուսանողները (հիմնականում գիտական ընկերության գծով) հանդես են եկել Մինսկում, Տաշքենդում, Աստրախանում, Թբիլիսիում և այլուր։ Կաբինետը ստեղծագործական կապեր է հաստատել Սովետական Միության բազմաթիվ բուհերի հետ։

Կաբինետի ստեղծման 10-ամյակի կապակցությամբ մայիսի 6—7-ը կոնսերվատորիան անցկացրեց գիտական նստաշրջան՝ երեք նիստով։

Հայ ազգային երաժշտությունն ամբողջությամբ վերցրած պատմական զարգացման տարբեր ժամանակահատվածներում սերել է ժողովրդական երգից։ Անմիջականորեն թե միջնորդավորված, այս արմատի հետ են կապված մեր ազգային ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության բոլոր ճյուղերը և կոմպոզիտորական ստեղծագործությունը։ Ժողովրդական երաժշտության գոյատևմամբ, փաստորեն, կոմպոզիտորական ստեղծագործությունը ստանում է նրա տարբեր շերտերին պարբերաբար դիմելու հնարավորություն, ժողովրդի արվեստը ստեղծագործորեն սեփականելու միջոցով պահպանում է ազգային նկարագիրը, ռեալիստական ուղղվածությունը։

Կաբինետը կոնսերվատորիայի կարևոր օղակներից մեկն է, որի բոլոր աշխատանքները հետամուտ են հարազատ բնաշխարհին, ժողովրդի արվեստին, նրա կյանքին ու կենցաղին, պատմությանը, աշխարհայացքին ու հոգեբանությանը, լեզվին ու մտածողությանը ուսանողին հաղորդակից դարձնելու, նրա մեջ մայրենին խո-

բապես ընկալելու ունակություն դաստիարակելու գործին։

Աշխատանքի յուրաքանչյուր բնագավառ, որ այսօր արդեն ղեկավարվում է փորձառու մանկավարժների կողմից, ունի իր նպատակը, խնդիրներն ու դժվարությունները։

Կաբինետում տարվող աշխատանքների հիմքերի հիմքը ժողովրդական երգերի հավաքումն է։ Այս աշխատանքով զբաղվել և զբաղվում են կաբինետի համարյա բոլոր աշխատակիցները։

Ժողովրդական երգերը հավաքվում են նրանց հետ կապված ազգագրական ու պատմական տվյալներով, երգի հորինման, տեղի ու ժամանակի, ստեղծողի կամ երգի բովանդակության մասին երգասացի հայտնած տեղեկություններով։ Դրանք արժեքավոր են երգի կենցաղավարման կենդանի պատմությունը ստեղծելու, ֆոլկլորի գոյության սոցիալական արմատները բացահայտելու, որևէ երգ մեկնաբանելու և այն ճիշտ հասկանալու գործում։ Արժեքավոր են նաև գրառողի անձնական տպավորությունների ու դիտողությունների արձանագրությունները. դրանք կարող են պատկերել հավաքողի ստեղծագործական նկարագիրը, ներկայացնել նրա վերաբերմունքը նյութի նկատմամբ, նրա հավաքչական աշխատանքի մեթոդը։

Այսօր բանահավաքների ու բանասերների շրջանում գերապատվությունը տրվում է հավաքչական կոմպլեքս մեթոդին, երբ նմուշը գրառելիս միավորվում են տարբեր մասնագետների ստեղծագործական ուժերը, ժամանակի խնայողությամբ և մասնագիտական մակարդակով գրի են առնվում միաժամանակ երգն ու պարը, խոսքն ու ազգագրության հետ կապված տվյալներ։

Տարիների հավաքչական փորձը հաստատում է միևնույն շրջանը պարբերաբար այցելելու անհրաժեշտությունը։ Յոթ օրում (մեր արշավների ամենատևական ժամկետը, բացառությամբ ամառվա ամիսների) շրջանը սպառել, նրա խորքերը թափանցել հնարավոր չէ։ Նման պայմաններում գրի է առնվում այն ամենը, ինչ մակերեսում է. թերևս, տարված աշխատանքը կարելի է համարել յուրատեսակ հետախուզական աշխատանք։ Բայց ոչ միայն դա. կարևորն այն է, որ որևէ շրջան ժամանակի ընթացքում արդեն գրի առնվածի կողքին տրամադրում է մեզ երգերի նոր փոփոխակներ, բոլորովին նոր երգեր։ Դրանց հրապարակ գալու հիմքերը տարբեր են՝ հասարակական կյանքի տեղաշարժեր, գիտարշավի բարերար հետևանք, նոր նմուշի հայտնաբերում և այլն։ Երբեմնի երիտասարդ սերունդը, որ այսօր արդեն միջին ու տարեցների սերունդ է դարձել, երգում է այն ամենը, ինչ չէր երգում կամ անհարմար էր զգում երգել առաջներում։ Սրաժշտագետ-ֆոլկլորագետ Բ. Ռ. Ռաբինովիչը այդ երևույթը բացատրում է այսպես. երիտասարդները ավանդական երգեր չեն երգում ոչ մոդայիկ երևալու վախից, անվստահության այն զգացողությունից, որ ծնվում է նրանց մոտ գյուղական վարպետ կատարողների ներկայությամբ, վերջապես, հոգեկան ու կենսական այն որոշակի հասունության անհրաժեշտությունից, որը պետք է հնագույն քնարական մի երգ ընկալելու և կատարելու համար։

Որևէ շրջան կատարած կրկնակի այցելությունը օգնում է մոռացված նմուշների վերհիշմանը, տարբերակների հայտնաբերմանը, որոնք կարող են լինել ավելի հավատի կամ գեղարվեստական արժանիքներով առավել բարձր։

Կաբինետի գործունեության կարևորագույն ոլորտն են կազմում գրի առնված նյութը ժողովրդին վերադարձնելու՝ ժողովրդական երգերի ժողովածուներ կազմելու և հրատարակելու ուղղությամբ տարվող աշխատանքները։ Կաբինետը հրատարակության է պատրաստում գիտական բնույթի ժողովածուներ, որոնցում կատարվում է նյութի խիստ ընտրություն՝ բացառելով կազմողի միջամտությունները. ծանոթագրությունների բաժնում տրվում են՝ նմուշների ժանրային և լեզվական-կոմպոզիցիոն կողմին վերաբերող բնութագրումներ (հաճախ ցանկերի ու ցուցակների օգնությամբ), տվյալներ երգի կենցաղավարման ձևերի մասին, բերվում են տարբերակներ, փորձ է արվում բացահայտել լեզվակերպարային առանձնահատկությունների հիմքերը։ Ժողովածուի բովանդակության ընձեռած հնարավորություններից ելնելով կազմվում են բառարաններ, այլաբայլ քարտեզներ, բերվում են կենսագրական տվյալներ երգասացների մասին։

Կաբինետում տարվող գիտական աշխատանքների մեջ կարևոր տեղ է գրավում էլեկտրոնային հաշվիչ մեքենայի օգնությամբ ժողովրդական երգի «գրադարանի» ստեղծումը։ Այդ բանի համար մշակված է ինֆորմացիոն-փնտրողական-վերլուծական բնույթի մի սիստեմ. որը բուհի աշխատանքներում ժամանակակից տեխնիկայի ներդրման օրվա պահանջի արձագանքն է։ Այդ աշխատանքի մասին Ի. Ռ. Լևինը, որի սիստեմով այժմ աշխատում են ՀՍՍՀ ԳԱ ազգագրության ինստիտուտում, գրել է. «Ваш путь и технология обработки данных представляются мне вполне реализуемыми. Подача информации на ЭВМ в принципе разумна».

Կիևի կոնսերվատորիայի ավագ դասախոս Ի. Պյասկովսկին իր մասնագիտական վերաորակավորումը կարինետում անցնելուց և Կիև վերադառնալուց հետո մեր աշխատանքների բարերար ազդեցության ներքո Կիևի կոնսերվատորիայում մի ամբողջ դասընթաց է նվիրել երաժշտագիտության մեջ հշգրիտ գիտությունների մեթոդիկայի ուսումնասիրմանը։

Ազգայինի բնագավառում իրենց մասնագիտական որակավորման բարձրացումը կարինետում են անցկացրել նաև սփյուռքահայ մի շարք ուսանողներ։

Կարինետը զբաղվում է նաև ժողովրդական երաժշտության պրոպագանդայի հարցերով։ Արշավների ընթացքում հայտնաբերված մեր լավագույն երգասացներն ու կատարողները հանդես են եկել «Անդրկովկասյան գարուն» փառատոնում (Թբիլիսի, 1975), ՍՍՀՄ կոմպոզիտորների միության համամիութենական ֆոլկլորային հանձնաժողովի կողմից ամեն տարի կազմակերպվող հաշվետու-էքսպեդիցիոն սեսիաներում (Մոսկվա, 1975, 1976, 1977 թթ.), Հայաստանի կոմպոզիտորների միության պլենումում՝ նվիրված ժողովրդական երաժշտությանը (Երևան, 1973), Ալմա Աթայում տեղի ունեցած «Трибуна Азии» միջազգային կոնգրեսում (1974), ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից միջազգային երաժշտական խորհրդի սեսիայում (Մոսկվա, 1971), 1978 թ. Սամարղանդում տեղի ունեցած միջազգային սիմպոզիումում՝ նվիրված մուղամաթի պրոբլեմներին և այլն։

Մեծ հաջողություն ունեցավ նաև 1974 թ. փետրվարի 4-ի հեռուստատեսային հաղորդումը՝ նվիրված կարինետի գործունեությանը։ Այն վերնագրված էր՝ «Կոմիտասի հետքերով»։ Փաստորեն այդ հաղորդումը յուրովի խթանեց ժողովրդական երաժշտության՝ եթերով տարվող պրոպագանդայի ակտիվացմանը։ Հեռուստատեսային հաղորդումների խմբագրության ստացած բազմաթիվ նամակներից քաղվածաբար բերենք մեկ-երկուսը միայն.

«Շատ ժողովրդական էր, հուզիչ, բնիկ հայկական՝ առանց աղավաղումների»։

«Այս հաղորդմամբ մեր հեռուստատեսությունը մի իսկական հոգեպարար, հաճելի բավականություն պատճառեց շատերիս։ Վերջապես սկսվեց երկար սպասվածը։ Գործը ճիշտ է սկսված, միայն հարկավոր է հետևողականությունն և դժվարություն հաղթահարելու կամք։ Ժողովրդական գոհար ստեղծագործություններով անչափ հարուստ մեր ժողովուրդը ձեզանից սպասում է վերադարձնել իրեն թեկուզ նվազագույնն այն ամենի, ինչ նա ստեղծել է տասնամյակներ և դարեր շարունակ»։

Հաղորդումը հետաքրքրություն առաջացրեց դեպի մեր գործը նաև ժողովրդական կատարողների մոտ։ Շուրջ 20 հոգի հաղորդման հաջորդ օրերին ներկայացան կարինետ՝ ձայնագրվելու (Ի. Կարապետյան, Ա. Թումանյան, Կ. Քաջունի, Վ. Ասլանյան և ուրիշներ)։

Կարինետն ունի հարուստ գրադարան, որից օգտվում են ինչպես ուսանողներն ու դասախոսները, այնպես էլ օտար մասնագետները, որոնցից ոմանք իրենց խոսքն են թողել կարինետի կարծիքների գրքում։ Մոսկվայի կոնսերվատորիայի երաժշտության տեսության ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Ե. Վ. Նազայկինսկին գրել է. «Кабинет народного творчества Ереванской консерватории, его руководитель и сотрудники—замечательный островок подлинно музыкального и прогрессивного подхода к изучению того удивительного, святого, прекрасного и жизненно многообразного, что есть в армянской музыкальной культуре, отражающей в своей сфере все богатства истории армянского народа, его жизни, обычаев, его удивительных географических трансформаций, его богатую и красочную природу и прежде всего душу—то неуловимое, чему можно удивляться, чем можно восторгаться и что следует бережно хранить, развивать».

Հիշատակելի է նաև Բելգիայի համալսարանի երաժշտագիտության բաժնի դոկտոր, պրոֆեսոր Յուրգեն Էլսներլի կարծիքը. «Աշխարհի երաժշտական մշակույթը լիարժեք չէր լինի, եթե նրանում իր տեղը գրված չլիներ Հայաստանը։ Երաժշտության զարգացման պատմության մեջ Հայաստանը այն օղակն է, որն ունի իր կարևորագույն օրինաչափությունները, դրանց ուշագրավ արտահայտությունը և սեփական դինամիկան։ Կարինետում ժողովրդապրոֆեսիոնալ-գործիքային ավանդական հարուստ երաժշտության պահվող նմուշներից ստացված տպավորությունները չափազանց մեծ են։ Հուսով եմ, որ ես կդառնամ այդ երաժշտության լավ պրոպագանդիստը»։

Կարինետի կազմը առայժմ մեծ չէ, սակայն կարևորն այն է, որ աշխատանքը խարսխված է անձնվիրության ու ազգային մշակույթի զարգացման նկատմամբ ցուցաբերվող սրտացավության վրա։ Ցենք տարակուսում մ. որ ապագայում այս փոքրիկ օջախը կհամալրվի երիտասարդ, շնորհալի նոր մասնագետներով և կրկնապատկված ուժերով կշարունակի իր բեղմնավոր և հանրօգուտ գործը։

Արվեստագիտ. թեկնածու Մ. Ա. ԲՐՈՒՏՅԱՆ